Արձանագրություն N 3
ՋԿ-ԳՀԽԾՁԲ-25/4-Տ ծածկագրով ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

ք. Երևան 25 հունիսի 2025թ.

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Է. Բաղայանը
Հանձնաժողովի անդամներ՝ Ս. Աբազյանը
Քարտուղար՝ Ա. Սարգսյան:

ՋԿ-ԳՀԽԾՁԲ-25/4-Տ ծածկագրով ընթացակարգի
մասնակիցների կողմից հայտերով ներկայացված փաստաթղթերի
ուսումնասիրության արդյունքներ

10.06.2025թ. գնահատող հանձնաժողովի նիստում Ընկերությունների կողմից ներկայացված հայտերում արձանագրված անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ.

«ՏԵԽՆՈ ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով և ժամկետում հայտում առկա արձանագրված անհամապատասխանությունները շտկվել են:

«Ռիջիդ» ՍՊԸ-ի կողմից Armeps համակարգում «տեխնիկական հսկողության ծառայություններ՝ Ճոճկան-1 պոմպակայանի մղման խողովակաշարի հիմնանորոգում»- **Չափաբաժին 1-ի** մասով-գնման առարկայի գնային առաջարկը կցված չի:

ՋԿ-ԳՀԽԾՁԲ-25/4-Տ ծածկագրով ընթացակարգի մասնակիցների կողմից հայտերով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքները գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. Հիմք ընդունելով հրավերի ՋԿ-ԳՀԽԾՁԲ-25/4-Տ ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.2-րդ կետի երկրորդ պարբերությունը «Ընդ որում հայտերի բացման և գնահատման նիստում **հանձնաժողովը մերժում է այն** հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկները և/կամ հայտի ապահովումը..» և 8.4 կետը «..հայտերը գնահատելիս հիմք է ընդունում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:» «Ռիջիդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը Չափաբաժին 1-ի մասով մերժել:
2. Չափաբաժին 1-ի մասով ընտրված մասնակից հայտարարել «ՏԵԽ ՔՈՆԹՐՈԼ» ՍՊԸ-ին:
3. Չափաբաժին 2-ի մասով ընտրված մասնակից հայտարարել «ՏԵԽՆՈ ՇԻՆ» ՍՊԸ-ին:
4. Առաջարկել հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին:
5. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:
6. Առաջարկել անգործության ժամկետի ավարտից հետո սահմանված կարգով ծանուցել ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա, 400 սենյակ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0
Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ _____ Է. Բաղայան

անդամներ _____ Ս. Աբազյան

Քարտուղար _____ Ա. Սարգսյան